«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Համագործակցային մեթոդների կիրառումը <<Սևանա լիճ>> թեմայի ուսուցման պրոցեսում

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Գոհարիկ Խաչատրյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Սպանդարյանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1.1 Համագործակցային ուսուցման տարրեր……..5

Գլուխ 1.2 Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները……6

Գլուխ 1.3 Համագործակցային ուսուցման մեթոդներ…….....7

Գլուխ 2.1 Համագործակցային մեթոդների կիրառումը <<Սևանա լիճ>> թեմայի ուսուցման պրոցեսում՝ Հայաստանի աշխարհագրության դասին……9

Եզրակացություն……՝15

Գրականության ցանկ……16

Ներածություն

Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում կրթական համակարգում ակտիվ կերպով իրականացվում են լուրջ բարեփոխումներ, որը պայմանավորված է ժամանակի նոր մարտահրավերներով, որոնց առանցքում գիտատեխնիկական առաջընթացն է, տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը:

Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականցվում է, ընդ որում ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև, գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Սրա արդյունքում էլ ավելի են արժևորվել բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները: Ըստ այդմ էլ երկուստեք դրսևորում են նոր սկզբունքայնություն և մարտավարության դրսևորում:

Հետևաբար նորարությունը պահանջում է մեթոդամանկավարժական, հետաքրքիր հնարներով հագեցած դաս վարել հատկապես աշխարհագրությունից: Արդյունքում ունենում ենք նախաձեռնող, իր որոշումների մեջ ինքնուրույն, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ: Ստացվում է, որ նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն կտա սովորողին դառնալ դասի ընթացքի կենտրոնական սուբյեկտը, լռողի իր դերից դուրս կգա, կսովորի, կսովորեցնի, կհետազոտի՝ ամրապնդելով մի շարք կենսական նշանակություն ունեցող հմտություններ և կարողություններ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի փուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, ուրեմն ուսուցիչն ամեն գնով պետք է օգնի սովորողին ինքնուրույն մտածելու, քննարկելու, որոշում կայացնելու, որպես նախաձեռնող հանդես գալու:

Հետազոտության նպատակը: Նպատակն է բարձրացնել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների համագործակցային, ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում,

նպաստել աշխարհագրություն առարկայի առավել մատչելի յուրացմանը, այդ գիտելիքները ի սպաս դնելու հայրենի երկրի տնտեսական զարգացմանը:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է կարևորել արդի գիտության պահանջները, դաստիարակել այդ պահանջներին լուծում տվող և յուրաքանչյուր երևույթին ստեղծագործաբար մոտեցող քաղաքացի:

Համագործակցային ուսուցում:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկապվածության ապահովումը:

Գլուխ 1.1 Համագործակցային ուսուցման տարրերը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկապվածություն: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական

հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետո այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր:

Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հետազոտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

1.2 Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները:

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր.

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են 2-4 անգամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր.

Սրանք ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիվ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր.

Այս խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում

են, աջակցում խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

1.3 Համագործակցային ուսուցման մեթոդներ:

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգ րոպեանոց ազատ շարադրանք

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ.

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը, լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (JIGSAW) սա մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են՝

- նյութի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքում
- աշխատանք փորձագիտական խմբում
- աշխատանք ուսումնական խմբում
- ավարտական աշխատանք
- ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում. Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք. Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբերով: Մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստը ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

5 րոպեանոց ազատ շարադրանք. Այս մեթոդը կարելի է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Գլուխ 2.1 Համագործակցային մեթոդի կիրառումը <<Սևանա լիճ>> թեմայի ուսուցման պրոցեսում՝ Հայաստանի աշխարհագրության դասին

Համայն հողագնդի վրա չկա մեկ այլ երկիր, որն այնքան լիքը լինի հրաշքներով, ինչքան հայերի երկիրն է:

Ջ. Բայրոն

Հայաստանի աշխարհագրության դասընթացը կոչված է լրացնելու հանրակրթական դպրոցի սովորողների հայրենագիտական և հայագիտական գիտելիքները, ճանաչելի դարձնելու սեփական հայրենիքի աշխարհագրական առանձնահատկությունները, զարգացնելու շրջակա միջավայրի և այնտեղ ընթացող բնական ու հասարակական երևույթների բազմաբնույթ կապերը դիտարկելու և վերլուծելու, նաև արդի աշխարհում հայերի տեղն ու դերը գնահատելու որոշակի կարողությունները:

Նպատակը և խնդիրները.

Կրթական - սովորողը պետք է՝

- ✓ Իմանա ջրագրական գլխավոր օբյեկտները, ջրաբանական առանձնահատկությունները, ջրային ռեսուրսները, լճի ջրային հաշվեկշիռը:
- ✓ Կարողանա քարտեզի վրա ցույց տալ գլխավոր լճերը, համցանցի Google Planeta ծրագրով տեսնել Սևանա լճի աշխարհագրական դիրքը, շրջապատող լեռները, թերակղզիները:

Դաստիարակչական

Սովորողը պետք է գիտակցի՝

- ✓ Սևանա լճի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները որպես Կովկասի << մարգարիտ >>:
- ✓ լճի բնառեսուրսային, բնապատմական, գեղագիտական արժեքը
- ✓ լճի դերը որպես Հայաստանի քաղցրահամ ջրի անփոխարինելի շտեմարան

- ✓ << Սևան>> ազգային պարկի նշանակությունը, ջրի անաղարտությունը, կենսաբանկան ռեսուրսների պահպանման և ռեկրեացիոն ռեսուրսների կազմակերպման համար:

Մեթոդները - << Մտքերի քարտեզագրում>>, << Համառոտ դասախոսություն >>, << Խճանկար>>, << Ապագայի անիվ >>:

Ուսումնադաստիարակչական միջոցներ և պարագաներ՝ աշխարհի և ՀՀ ֆիզիկական քարտեզ, ՀՀ բուսական և կենդանական աշխարհի քարտեզ, Սևանա լճի գեղանկարներ, համակարգիչ, պրոյեկտոր:

Դասի ընթացքը

Հրահանգել աշակերտներին հաշվել 1-4-ը և միևնույն համարների միավորումով ձևավորել համապատասխան թվով խմբեր:

1 խումբ - Ներկայացնում են Սևանա լճի աշխարհագրական դիրքը, շրջապատող լեռները, թերակղզիները:

2 խումբ - Ներկայացնում են ջրագրական գլխավոր օբյեկտները, ջրաբանական առանձնահատկությունները, ջրային ռեսուրսները, լճի ջրային հաշվեկշիռը:

3 խումբ - Կբնութագրի լճի բնառեսուրսային, բնապատմական, գեղագիտական, արժեքը:

4 խումբ - Կներկայացնեն լճի դերը որպես Հայաստանի քաղցրահամ ջրի անփոխարինելի շտեմարան:

5 խումբ - <<Սևան>> ազգային պարկի նշանակությունը, լճի նշանակությունը՝ ռեկրեացիոն տնտեսություն կազմակերպելու տեսանկյունից:

6 խումբ - Ներկայացնում են լճի հիմնախնդիրները << Ապագայի անիվ>> մեթոդով

Դասի ընթացքը

1. Խթանման փուլ

Թվարկում ենք ՀՀ-ի տարածքում գոյություն ունեցող լճերը և դասակարգում ըստ՝

ըստ ծագման	ըստ հոսքի	ըստ քիմիական կազմի
տեկտոնական	հոսուն-անհոսք	քաղցրահամ- աղի
տեկտոնահրաբխային		
սառցադաշտային		
հրաբխային		
փլուզումնային		

Աղյուսակ 1.

Այնուհետև շեշտը դնում ենք Սևանա լճի վրա և հիշում լճի վերաբերյալ ի՞նչ կարծիքներ կան:



Գծապատկեր 1.

Հակիրճ ներկայացնում ենք անվանումների հետ կապված ավանդազրույցները: Այս մեթոդի կիրառման համար տրամադրում ենք 10 րոպե:

2. Իմաստի ընկալման փուլ

Այս փուլում կիրառում եմ դասախոսության մեթոդը, որի ընթացքում ներկայացնում եմ լճի համառոտ բնութագիրը, նրա բնական պայմանների նկարագիրը, ջրային պաշարների ոչ արդյունավետ օգտագործումը և նրա հետևանքները:

Սևանա լճի ջրաբանական տվյալները՝

1930 թ.	1960 թ.	այժմ
մուտքը	s = 1250 կմ^2	s = 1262 կմ^2
1.3 կմ^3 s = 1416 կմ^2 ծ.մ-ից բբ. 1916 մ v = 58 կմ^3 խորությունը – 98մ	ծ.մ-ից բբ. 1898 մ v = 32 կմ^3 խորությունը – 80 մ	ծ.մ-ից բբ. 1901 մ v = 36 կմ^3 խորությունը – 83 մ

Աղյուսակ 2.

Այնուհետև յուրաքանչյուր խումբ կաշխատի իր հանձնարարության կատարման ուղղությամբ, տրվում է աշխատանքի կատարման ժամանակ:

Սահիկահանդեսի միջոցով աշակերտները դիտում են Սևանա լճի գեղանկարները (հեղինակներ՝ Գ. Բաշինջաղյան, Փ. Թերլեմեզյան, Ս.Առաքելյան, Ս. Ռաշմաճյան, Մ. Քամալյան, Մ. Աբեղյան, Գ. Շարբաբյան):

Հետո դիտարկելով և համեմատելով Սևանա լճի նախկին և ներկայիս վիճակագրական տվյալները համոզվում են թե ինչ չափերով է էկոհամակարգը ենթարկվել փոփոխության:

Համապատասխան քարտեզների, պաստառների, համակարգչի և պրոյեկտորի օգնությամբ կպարզաբանվի յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունավետ կողմը: Խմբերը կսովորեցնեն իրենց հանձնարարությունը մյուս խմբերին՝ փոխարենը մյուսներից սովորելով այն, ինչին իրենք պատրաստ չեն:

Արդյունքում կատարում եմ գնահատում՝ յուրաքանչյուրին իր աշխատանքի համեմատ:

Այսպիսով, այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր

խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում ողջ դասարանի սեփականությունը:

Նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Այս մեթոդի առավելությունը այն է, որ ընկերների հետ համագործակցելով օգնում են միմյանց առաջադրված հարցերի պատասխանները գտնելու: Իմաստավորման փուլին տրվում է 20 րոպե:

3. Կշռադատման փուլ

Այն խումբը, որին հանձնարարված էր ներկայացնել Սևանա լճի հիմնախնդիրները <<Ապագայի անիվ>> մեթոդի օգնությամբ, վերլուծում են լճի հիմնախնդրի պատճառահետևանքային կապերը:



Գծապատկեր 2.

Այս ամենից ելնելով հանձնարարում եմ խմբերին գտնել Սևանա լճի հիմնախնդրի լուծման իրենց տարբերակները:

Կշռադատման փուլին հատկացնում եմ 10 րոպե:

Դասաժամի ավարտին կատարում եմ գնահատում՝ յուրաքանչյուր աշակերտին իր աշխատանքի համեմատ տալիս եմ տնային հանձնարարություն:

ՀՀ Բնապահպանության Նախարարությունը 2009-ին որոշում է ընդունել, որ օգոստոսի վերջին կիրակի օրը նշվելու է Սևանա լճի օր, այդ օրը մեր կոչերով, լոզունգներով ինտեգրվենք այս հիմախնդրի լուծման աշխատանքներին:

Կարծում եմ այս դասի նյութը մատուցելու համար ընտրածս մեթոդները ճիշտ էին, որովհետև ես հասա իմ նպատակին:

Եզրակացություն

Ավարտելով հետազոտական աշխատանքը կարող ենք ասել, որ աշխարհագրության ուսուցումը հանրակրթական դպրոցում առավել արդյունավետ կազմակերպելու համար պետք է մշտապես կիրառել մեթոդական հնարներ, ավանդական մեթոդները զուգակցել ժամանակակից հնարներով, բացահայտել աշակերտի կարողություններն ու հմտությունները և հասնել առավել հաջող արդյունքի:

Պրոցեսի ընթացքում լսելի դարձնել աշակերտի խոսքը, կարծիքը, նրա ցանկությունը՝ մեթոդի ընտրության հարցում:

Ամեն ինչ կախված է նրանից, թե ուսուցիչը ինչքանով է ճիշտ ու կառուցողական վարում դասը՝ միաժամանակ հաշվի առնելով սովորողների ընկալելու կարողությունը, երևույթը տեղայնացնելու կարողությունը, իր հմտությունները ի սպաս դնելու հայրենիքը շենացնելու գործընթացին:

Ողջ կրթական գործընթացի հիմնական նպատակն է ծառայեցնել ձեռք բերած գիտելիքները կյանքում, լինել արդարամիտ:

Օգտագործված գրականություն

Johnson. D., Johnson, R (1999) Learning together and alone: cooperative,

Competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon

Cooperative Learning

https://en,wikipedia.org/wiki/

1. Մ. Մանասյան Ա. Հովսեփյան << Աշխարհագրություն Հայաստան>>, 9-րդ դասարան, << Տիգրան Մեծ>> հրատարակչություն, Երևան 2014թ.:
2. Մ. Մանասյան Ա. Հովսեփյան << Աշխարհագրություն Հայաստան>>, 9-րդ դասարան Ու2, << Տիգրան Մեծ>> հրատարակչություն, Երևան 2014թ.: